

Ազգանուն, անուն, դպրոց _____

Ընդունելության քննություն մաթեմատիկայից 5-6-րդ դասարան 22.06.22

Մինչև թեստը սկսելը խնդրում ենք ուշադիր կարդացեք այս հրահանգները

- Գրեք Ձեր անունը և դպրոցը այս էջի վերևում:
- Պատասխանեք այս թեստի բոլոր հարցերին, օգտագործելով միայն *կապույտ կամ սև գրիչ*. կարող եք այն վերցնել թեստը վերահսկողից:
- Յուրաքանչյուր խնդրի լուծում գրեք խնդրի ներքևում հատկացված տեղում, իսկ ընտրովի պատասխաններով խնդիրների ճիշտ պատասխանների համարները վերցրեք օղակի մեջ:
- Մի բացեք մետաղական ամրակները: Եթե հաշվարկների կամ նշումների համար լրացուցիչ տեղի կարիք ունեք, օգտագործեք էջի հակառակ կողմը:
- Յուրաքանչյուր ճիշտ լուծված առաջադրանքի համար դուք կստանաք հարցի համարի կողքին նշված միավորը:
- Խնդրում ենք գրեք կոկիկ և ընթեռնելի, գծագրերը գծելիս օգտագործեք քանոն և մատիտ:
- Չի թույլատրվում օգտագործել հաշվիչ:
- Առաջադրանքի տևողությունը 120 րոպե է:

Մաղթում ենք հաջողություն

1. (0,4 միավոր) Ինչպե՞ս կփոխվի տարբերությունը, եթե նվազելին մեծացնենք 5–ով, իսկ հանելին փոքրացնենք 2–ով:

1) կփոքրանա 7–ով	2) կմեծանա 7–ով
3) կմեծանա 3–ով	4) կփոքրանա 3–ով

2. (0,4 միավոր) Թիվը 7–ի բաժանելիս մնացորդում ստացվում է 5: Ի՞նչ մնացորդ կստացվի այդ թվի եռապատիկը 7–ի բաժանելիս:

1) 5	2) 1	3) 4	4) 3
------	------	------	------

3. (0,4 միավոր) Գտնել $\frac{1}{4}$ և $\frac{2}{5}$ թվերի գումարի հակադարձ թիվը:

1) $\frac{20}{13}$	2) $\frac{13}{20}$	3) $\frac{20}{3}$	4) $\frac{3}{20}$
--------------------	--------------------	-------------------	-------------------

4. (0,4 միավոր) Ի՞նչ թվի պետք է բաժանել $\frac{2}{5}$ կոտորակը, որպեսզի ստացի 4:

1) $1\frac{3}{5}$	2) $\frac{1}{10}$	3) $\frac{2}{5}$	4) 4
-------------------	-------------------	------------------	------

5. (0,4 միավոր) 12–ի բազմապատիկ քանի՞ եռանիշ թիվ կա:

1) 83	2) 74	3) 75	4) 76
-------	-------	-------	-------

6. (0,4 միավոր) Նշվածներից ո՞րն է 15–ի հետ փոխադարձաբար պարզ ամենամեծ երկնիշ թիվը:

1) 96	2) 94	3) 99	4) 95
-------	-------	-------	-------

7. (0,4 միավոր) Հետիոտնը 3 կմ–ը անցավ մեկ ժամում: Որքա՞ն ժամանակում նա կանցնի 250 մ–ը:

1) 12 ր	2) $\frac{1}{5}$ ժ	3) 5 ժ	4) 5 ր
---------	--------------------	--------	--------

8. (0,4 միավոր) Նշված թվերից ընտրել այն, որը երկու պարզ թվերի արտադրյալ է:

1) 102	2) 135	3) 106	4) 117
--------	--------	--------	--------

9. (0,4 միավոր) Քանի՞ անգամ է 8-ի բոլոր բաժանարարների գումարը մեծ 8-ից:

1) $\frac{7}{4}$

2) $\frac{8}{15}$

3) $\frac{7}{8}$

4) $1\frac{7}{8}$

10. (0,4 միավոր) Խորանարդի ծավալը 27 սմ³ է: Որքա՞ն է խորանարդի բոլոր նիստերի մակերեսների գումարը:

1) 36 սմ²

2) 54 սմ²

3) 9 սմ²

4) 486 սմ²

11. (3 միավոր) Հաշվել.

ա) $80 \text{ դմ}^2 - \frac{1}{2} \text{ մ}^2 =$ մ²

բ) $3 \text{ կմ/ժ} - 20 \text{ մ/ր} =$ մ/ր

գ) $780 \text{ կգ} - \frac{3}{4} \text{ տ} =$ կգ

12. (1,5 միավոր) 120⁰-ի հավասար անկյան գագաթից դուրս եկող ճառագայթը այն բաժանել է երկու անկյունների, որոնցից մեկը մյուսից մեծ է 8 անգամ: Գտնել այդ անկյուններից փոքրը:

13. (3 միավոր) Հաշվել արտահայտության արժեքը. $6\frac{5}{6} : \left(\frac{1}{15} + 2\frac{2}{3}\right) + \frac{5}{23} \cdot \left(3\frac{1}{10} - \frac{4}{5}\right)$:

14. (2,5 միավոր) Քանի՞ անգամ է 35 և 147 թվերի ամենափոքր ընդհանուր բազմապատիկը մեծ նրանց ամենամեծ ընդհանուր բաժանարարից:

15. (2 միավոր) 12 կմ հեռավորություն ունեցող երկու վայրերից միաժամանակ միմյանց ընդառաջ դուրս եկան երկու հեծանվորդներ՝ 10 կմ/ժ և 8 կմ/ժ արագություններով: Յուրաքանչյուրը հասավ մյուս վայրը, շրջվեց և հետ գնաց նույն արագությամբ: Առաջին հանդիպումից քանի՞ ժամ հետո նրանք կհանդիպեն երկրորդ անգամ:

16. (2,5 միավոր) Դասարանն էքսկուրսիայի համար հավաքած փողի $\frac{2}{5}$ մասն ավտոբուսին վճարեց, մնացածի $\frac{3}{13}$ -ով սնունդ գնեց: Դրանից հետո 48000 դրամ մնաց: Սկզբում ինչքա՞ն փող ունեին:

17. (1,5 միավոր) Գտնել այն բոլոր թվերը, որոնք աստղանիշի փոխարեն գրելու դեպքում $\frac{*}{7}$ -ը կլինի կանոնավոր կոտորակ, իսկ $\frac{3}{*}$ -ը՝ անկանոն: